

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ
ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հունվար, 2015



Երևան, 2015

Բովանդակություն

Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր.....	2
Ֆինանսական դիրք.....	3
Վարկային պորտֆել և համեմատականներ	3
Տրամադրված վարկերի ծավալ.....	3
Տրամադրված վարկերի քանակ.....	4
Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ.....	5
Վարկերի Կառավարում.....	6
Վերլուծական գործակիցներ.....	7
Հավելված.....	9


Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր

ՀՀ վարկային կազմակերպությունների միության անդամներն իրենց տնտեսական գործունեության վերաբերյալ ՀՀ վարկային կազմակերպությունների միությանն (ՀՀ ՎԿՄ) ամսական կտրվածքով տրամադրում են տասը տնտեսական ցուցանիշներ: Այդ ցուցանիշների հիման վրա Վարկային կազմակերպությունների միությունն իրականացնում է ֆինանսական վերլուծություն, որի նպատակն է միության անդամներին ներկայացնել վարկային ինդուստրիայում տեղի ունեցող տնտեսական շարժերը: Ցուցանիշների մի մասը հրապարակային տեղեկատվություն է, որոնք տեղ են գտնում վարկային կազմակերպությունների կողմից ներկայացվող եռամսյակային հաշվետվություններում: Սակայն սույն վերլուծության համար ՎԿՄ-ի անդամ կազմակերպությունների կողմից տրամադրվում են նաև այնպիսի տնտեսական ցուցանիշներ, որոնք տեղ չեն գտնում հրապարակային եռամսյակային հաշվետվությունների մեջ:

Ֆինանսական Դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿՄ անդամների համախառն ակտիվները 2015թ.-ի հունվարի 31-ի դրությամբ կազմել են 109 մլրդ դրամ՝ 2014թ.-ի հունվարի նկատմամբ ունենալով 27.8% աճ, իսկ 2014թ.-ի դեկտեմբերի նկատմամբ՝ 1.5% (Գծ. 1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը 2015թ.-ի հունվարի 31-ի դրությամբ կազմել է 95.04 մլրդ դրամ՝ նախորդ տարվա հունվարի նկատմամբ ունենալով 20.2% աճ, իսկ 2014թ. դեկտեմբերի նկատմամբ նվազելով 1.3 %-ով:
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալը 2015թ.-ի հունվարի վերջի դրությամբ կազմել է 33.3 մլրդ դրամ՝ 2014թ.-ի հունվարի նկատմամբ աճելով 13.6%, իսկ 2014թ.-ի դեկտեմբերի նկատմամբ նվազելով 0.2%-ով:

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿՄ անդամների ֆինանսական դիրքը 2014-2015թթ.-ների հունվարի վերջի դրությամբ




Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2015թ.-ի հունվար ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 3.8 մլրդ դրամի վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 64.8%, իսկ 2014թ.-ի հունվարի նկատմամբ՝ 28.6%-ով (Գծ. 2):


Գծապատկեր 2. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից հունվար ամսին տրամադրված վարկերի ծավալը




Տրամադրված վարկերի քանակը

- 2015թ.-ի հունվար ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 6,825 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 50.6%, իսկ 2014թ.-ի հունվարի նկատմամբ՝ 20.2%-ով (Գծ. 3):
- 2015թ.-ի հունվար ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամները ունեցել են 142,697 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2014թ.-ի հունվարի նկատմամբ աճել է 7.7%-ով, իսկ 2014թ.-ի դեկտեմբերի նկատմամբ՝ 0.2%-ով:
- ՀՀ ՎԿՄ անդամների կողմից 2015թ.-ի հունվարին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 552 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը՝ 666 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2014թ.-ի հունվարին կազմել են համապատասխանաբար՝ 617 և 596 հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից հունվար ամսին տրամադրված վարկերի քանակը




Գծապատկեր 4. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծությունը



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2015թ.-ի հունվարի դրությամբ միության անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 122 մասնաճյուղ, որը համեմատած 2014թ.-ի հունվարի աճել է 14-ով:
- ՀՀ ՎԿՄ անդամները 2015թ.-ի հունվարի դրությամբ ունեցել են 612 վարկային մասնագետ, 2014թ.-ի հունվարի 600 վարկային մասնագետի համեմատ:
- 2015թ.-ի հունվարին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկային պորտֆելը կազմել է 6.2 մլն դրամ, նախորդ ամսին՝ 17.4 մլն դրամ, իսկ 2014թ.-ի հունվարին՝ 8.8 մլն դրամ (Գծ. 5):
- 2015թ.-ի հունվարի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 155.3 մլն դրամ, նախորդ ամսվա 156.1 մլն դրամի և 2014թ.-ի հունվարի 131.7 մլն դրամի համեմատ:

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿՄ անդամների միջին վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով




Վարկերի Կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿՄ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2015թ.-ի հունվարի վերջի դրությամբ կազմել է 1073.6 մլն դրամ, նախորդ ամսվա 530.6 մլն դրամի և 2014թ.-ի հունվարի՝ 520 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը աճել է 106.5 %-ով, իսկ 2014թ.-ի դեկտեմբերի նկատմամբ՝ 102.3%-ով: 2015թ.-ի հունվարի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.13%-ը, 2014թ.-ի հունվարին՝ 0.66%-ը (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿՄ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2015թ.-ի հունվարի վերջի դրությամբ կազմել է 1,618.7 մլն դրամ, նախորդ ամսվա 1418.5 մլն դրամի և 2014թ.-ի հունվարի՝ 895 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 80.9%-ով, իսկ 2014թ.-ի դեկտեմբերի նկատմամբ՝ 14.1%-ով: 2015թ.-ի հունվարի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.7%-ը, 2014թ.-ի հունվարին՝ 1.13%-ը:

- **Ջուտ դուրսգրումներ:** 2015թ.-ի հունվարի վերջի դրությամբ միության անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 143.9 մլն դրամ, նախորդ ամսվա 776.5 մլն դրամի և 2014թ.-ի հունվարի՝ 95.9 մլն դրամի համեմատ: Ջուտ դուրս գրված վարկերի ծավալը 2015թ.-ի հունվարին նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 81.5%-ով, իսկ 2014թ.-ի հունվարի նկատմամբ՝ 1.5 անգամ: Միության անդամների սույն թվականի հունվարին զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.15%-ը, նախորդ ամսվա 0.81%-ի և 2014թ.-ի հունվարի 0.12%-ի համեմատ:

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿՄ անդամների վարկերի ծավալները հունվարի 31-ի դրությամբ




Վերլուծական գործակիցներ

- 2015թ.-ի հունվարի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 87.2%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2014թ.-ի հունվարին կազմել է 92.6% (Գծ. 7):
- Սույն թվականի հունվարի դրությամբ միության անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 35%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ միության անդամների վարկավորման ծավալի 35%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2014թ.-ի հունվարին կազմել է 37.1%:

- 2015թ.-ի հունվարի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 30.5%, որը վկայում է միության անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2014թ.-ի հունվարին կազմել է 34.3%: Նախորդ տարվա նկատմամբ այս ցուցանիշի նվազումը վկայում է այն մասին, որ միության անդամ վարկային կազմակերպությունները վերջին մեկ տարում վարկավորման նպատակով ավելի շատ ֆոնդեր են ներգրավել:
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2015թ.-ի հունվար ամսվա դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների համար այս գործակիցը կազմել է 2.28, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 2.28 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա հունվարի համար կազմել է 1.91: Կապիտալի և պարտավորությունների գործակցի աճը վկայում է վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության աճի մասին:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿՄ անդամների վերլուծական գործակիցներ



ՀՀ ՎԿՄ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՆՍՈԼԻԴԱՑՎԱԾ ԿՈՒՄՈՒԼՅԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՈՒՆՎԱՐ -2015 - Կոմունյատիվ

հազ. դր

Category	Jan-15
Total volume of disbursements within particular month	6,825
Հաշվետու ամսվա ընթացքում տրամադրված վարկերի քանակը և ծավալը	3,769,460
Gross Loan Portfolio	
Համախառն վարկային պորտֆել	95,042,256
Number of clients	
Ակտիվ վարկառուների քանակ	142,697
PAR 1-30 days	
Ժամկետանց պորտֆել 1-30 օր	1,073,588
PAR over 30 days	
Ժամկետանց պորտֆել 30 օրից ավելի	1,618,699
Net write offs YTD	
Զուտ դուրսգրումներ տարեսկզբից	143,909
Number of credit officers	
Վարկային մասնագետների թիվը	612
Total number of offices - branches and representative offices	
Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ընդհանուր թիվը	122
Total assets	
Ընդամենը ակտիվներ	109,023,164
Total equity	
Ընդհանուր կապիտալ	33,290,214

Գործակիցներ հաշվարկված յուրաքանչյուր ամսվա համար

Category	Jan-15
Average Loan Volume /for this month/ thousands Drams	
Վարկի Միջին Մեծությունը /այս ամսվա համար/ հազ. Դր.	552
Average Loan Volume of Gross Portfolio / thousands Drams	
Համախառն Վարկերի Միջին Մեծությունը / հազ. Դր.	666
PAR 1-30 days / Loan Portfolio Ratio (%)	
Ժամկետանց պորտֆել 1-30 օր / Վարկային Պորտֆել Գործակից (%)	1.13%
PAR over 30 days / Loan Portfolio Ratio (%)	
Ժամկետանց պորտֆել 30 օրից ավելի / Վարկային Պորտֆել Գործակից (%)	1.70%
Net write offs YTD / Loan Portfolio Ratio (%)	
Զուտ դուրսգրումներ տարեկան / Վարկային Պորտֆել Գործակից (%)	0.15%
Disbursements Per Loan Officer / for this month/ thousands Drams	
Մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը / այս ամսվա համար/ հզ. Դր.	6,159
Gross Loan Portfolio for Per Loan Officer / thousands Drams	
Մեկ Վարկային մասնագետի հաշվով Վարկային պորտֆելի միջին մեծությունը / հզ. Դր.	155,298
Loan Portfolio / Total Assets Ratio (%)	
Վարկային Պորտֆել / Ակտիվներ հարաբերակցություն (%)	87.2%
Equity / Loan Portfolio Ratio (%)	
Ընդհանուր Կապիտալ / Համախառն Վարկային Պորտֆել հարաբերակցություն (%)	35.0%
Equity / Assets (%)	
Ընդհանուր Կապիտալ / Ակտիվներ հարաբերակցություն (%)	30.5%
Debt to Equity Ratio (%) (Leverage Ratio)	
Ընդհանուր Կապիտալ/Պարտավորություններ հարաբերակցություն (%)	227.5%

ՀՈՒՆՎԱՐ - 2014 - Կումուլյատիվ

հազ. դր

Category	Jan-14
Total volume of disbursements within particular month	8,557
Հաշվետու ամսվա ընթացքում տրամադրված վարկերի քանակը և ծավալը	5,277,741
Gross Loan Portfolio	
Համախառն վարկային պորտֆել	79,044,663
Number of clients	
Ակտիվ վարկառուների քանակ	132,547
PAR 1-30 days	
Ժամկետանց պորտֆել 1-30 օր	519,952
PAR over 30 days	
Ժամկետանց պորտֆել 30 օրից ավելի	894,952
Net write offs YTD	
Զուտ դուրսգրումներ տարեսկզբից	95,923
Number of credit officers	
Վարկային մասնագետների թիվը	600
Total number of offices - branches and representative offices	
Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ընդհանուր թիվը	108
Total assets	
Ընդամենը ակտիվներ	85,326,250
Total equity	
Ընդհանուր կապիտալ	29,294,591

**ԱՃը ըստ ամիսների %
(2015 թվականը 2014 թվականի համապատասխան ամսվա նկատմամբ)**

Category	Jan
Total volume of disbursements within particular month	(20.2)
Հաշվետու ամսվա ընթացքում տրամադրված վարկերի քանակը և ծավալը	(28.6)
Gross Loan Portfolio	
Համախառն վարկային պորտֆել	20.2
Number of clients	
Ակտիվ վարկառուների քանակ	7.7
PAR 1-30 days	
Ժամկետանց պորտֆել 1-30 օր	106.5
PAR over 30 days	
Ժամկետանց պորտֆել 30 օրից ավելի	80.9
Net write offs YTD	
Ձուտ դուրսգրումներ տարեսկզբից	
Number of credit officers	
Վարկային մասնագետների թիվը	2.0
Total number of offices - branches and representative offices	
Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ընդհանուր թիվը	13.0
Total assets	
Ընդամենը ակտիվներ	27.8
Total equity	
Ընդհանուր կապիտալ	13.6